



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**ԹԵՄԱ Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և գործիքների կիրառումն  
ուսումնական գործընթացում**

**ԱՌԱՐԿՄ**

**Անգլերեն**

**ՀԵՂԻՆԱԿ**

**Լուսինե Վարդանյան**

**ՄԱՐԶ**

**Արագածոտն մարզ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Գեղարոտի միջ.դպրոց**

## Բովանդակություն

1. Ներածություն .....  
..... 1
2. Գլուխ 1. Ավանդական ուսուցման տեխնոլոգիան և ժամանակակից  
ուսուցման տեխնոլոգիան ուսումնական գործունեության մեջ: ..... 2
3. Գլուխ 2. Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և գործիքների կիրարկումը  
դասապրոցեսում և արդյունքների գնահատում : .....  
. 10
4. Եզրակացություն .....  
..... 14
5. Օգտագործված գրականություն .....  
..... 16

## Ներածություն

Տեխնոլոգիան ցանկացած բնագավառի, արհեստի, արվեստի օգտագործվող մեթոդների ամբողջություն է: Ես ընտրում եմ հետևյալը՝ մանկավարժական տեխնոլոգիան լավ մտածված մոդել է համատեղ մանկավարժական գործունեության նախագծման, կազմակերպման և իրականացման ուսումնական գործընթացում, միաժամանակ ապահովելով անվերապահորեն հարմարավետ պայմաններ աշակերտների և ուսուցիչների համար:

Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների թվին կարելի է դասել՝

- ծրագրային ապահովման մշակում
- ուսուցանող ինտերակտիվ համակարգերի խաղային մեթոդների ուսուցման մեջ օգտագործման տեխնոլոգիան՝ դերային, գործնական, դիդակտիկ ինտերակտիվ խաչբառեր, գնահատման թեստավորում և այլ տեսակի ուսուցողական խաղեր
- համագործակցային ուսուցում (թիմային, խմբային աշխատանք)

Մանկավարժական տեխնոլոգիաների տիրապետումն ուսուցչին հնարավորություն է տալիս կազմակերպել մանկավարժական ազդեցություն՝ երեխային սուբյեկտի դիրք փոխադրելու համար: Մանկավարժական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակը կարող է լինել տարրական և մասնագիտական:

**Կրթական տեխնոլոգիաների օգտագործման նպատակն է** զարգացնել աշակերտի ինքնուրույնությունը, նրա ստեղծագործական ունակությունները, առարկայի նկատմամբ հետաքրքրությունը, սովորելու ցանկության և կարողության ձևավորումը:


### Խնդիրները՝

1. դպրոցականների մոտ խնդիրներ լուծելու, ընտրության իրավիճակում պատասխանատու որոշումներ կայացնելու կարողություններ ձևավորելու համար
2. ներգրավել երեխաներին նախագծման գործունեության մեջ և սովորեցնել ներկայացնել նախագծերը
3. ներդնել կրթական տեխնոլոգիաներ՝ ուղղված դպրոցականների ճանաչողական և ստեղծագործական գործունեության զարգացմանը:

«Սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում » ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է: Սա է տվյալ տեխնոլոգիաների օգտագործման արդիականությունը:

## Գլուխ 1. Ավանդական ուսուցման տեխնոլոգիան և ժամանակակից ուսուցման տեխնոլոգիան ուսումնական գործունեության մեջ

### Ավանդական ուսուցման տեխնոլոգիա



ժամանակակից կրթության նպատակները փոքր-ինչ փոփոխվել են, փոխվել է բարոյական դաստիարակության բնույթը, սակայն մի շարք ուսումնական չափանիշներ մնացել են նույնը: Սա նշանակում է, որ ավանդական ուսուցման տեխնոլոգիան շարունակվում է կիրառվել կրթական համակրգում և պահպանում է իր գերակայությունը գիտելիքի հաղորդման պարագայում:

Այսօր կիրառելի են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ՝ ավանդական և նորարական: Մենք չենք կարող հստակ ասել, որ պետք է հրաժարվել ավանդական տեխնոլոգիայից և օգտագործել միայն նորարական տեխնոլոգիաները, քանի որ դասավանդման լիարժեք դեղատոմս գոյություն չունի, և որի դեպքում լիարժեք ու դրական արդյունք կունենանք ոչ ոք չգիտի: Ավանդական ուսուցման տեխնոլոգիան դաս դասարանային համակարգի հիմքն է:[5] Ավանդական ուսուցում տերմինը նշանակում է ուսուցման կազմակերպում, որը 17-րդ դարի սկզբներին ձևակերպել է Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» գրքում: Ավանդական ուսուցման բովանդակությունը մեր երկրում զարգացել է

հիմնականում խորհրդային ժամանակաշրջանի հանրակրթական դպրոցներում: Նախ ներկայացնենք, թե ինչ է իրենից ներկայացնում ավանդական ուսուցումը: Ավանդական ուսուցման տեխնոլոգիան հիմնված է բացատրական-ցուցադրական մեթոդի վրա: Ավանդական ուսուցման ժամանակ դասը բաժանվում է երկու հատվածի՝ հին նյութի հարցում և նոր նյութի հաղորդում: Այս գործընթացը կրկնվում է ամեն օր և սովորողը մի դասին հասցնում է առնվազն 2-3 անգամ լսել միևնույն նյութը, չհաշված, որ ինքն այդ նյութը լսել է նաև նախորդ դասին, երբ դասավանդողը հաղորդում էր նոր նյութը: Հենց այս ամենն էլ ձանձրույթ է պատճառում ժամանակակից սովորողին, որը ակտիվություն է ուզում: Այս պարագայում անտեսվում են սովորողի մի շարք որակական հատկանիշներ, որոնք նրան կարող են մղել ինքնազարգացման: Մենք առաջարկում ենք ավանդական ուսուցման ժամանակ կիրառել տարբեր նորարական տեխնոլոգիաներ՝ կրթական

բարձր մակարդակ ապահովելու և ժամանակակից պահանջները կատարելու նպատակով:[6] Օրնակ`անգլերենի դասին կարելի է ավանդական ուսուցման տեխնոլոգիայի հետ համատեղ կիրառել նաև տեղեկատվական ուսուցման տեխնոլոգիան: Դրա համար անհրաժեշտ է պատկերացում ունենալ բոլոր տեխնոլոգիաների մասին և կատարել ճիշտ ընտրություն, որը կախված է բազմաթիվ գործոններից`

- սովորողների տարիք,
- թեմայի արդիականություն և հրատապություն,
- սովորողների ընդգրկվածություն,
- սովորողների ինտելեկտուալ մակարդակ և այլն:

Ավանդական ուսուցման դեպքում.

- խմբում հավաքվում են միևնույն տարիքի երեխաներ, որոնք ունեն տարբեր ինտելեկտուալ մակարդակ,
- խումբն աշխատում է ըստ ժամանակացույցի` մեկ տարեկան պլանի և ծրագրի համաձայն,
- դասաժամը տրվում է մեկ ուսումնական առարկայի և բոլոր սովորողները սերտում են միևնույն նյութը,
- դասարանում սովորողների աշխատանքը գլխավորում է ուսուցիչը:

Ավանդական ուսուցման տեխնոլոգիայի հիմնական բացասական հատկանիշներն են.

1. կրթել աշակերտներին պատրաստի նյութի մատուցման միջոցով, պատրաստի գիտելիքների հաղորդում,
2. ուսուցման գործընթացի երեք հիմնական գործառույթներն են` հաղորդում, վերահսկում և գնահատում,
3. հաշվի չի առնվում աշակերտի մտավոր ունակությունների փոփոխությունները, մեխանիկական հիշողություն:[7]

Ավանդական ուսուցման նպատակը հիմնականում գիտելիքների հաղորդումն է, մասամբ էլ հմտությունների ձևավորումը: Այս տեխնոլոգիայի կիրառման դեպքում անտեսվում է կրթության ժամանակակից պահանջը` ապահովել անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Այս տեխնոլոգիան կիրառելիս հաշվի չի առնվում սովորողի անհատական ունակությունները, հետին պլան են մղվում ստեղծագործական ունակությունները: Ավանդական տեխնոլոգիան հիմնականում կիրառում է ավտորիտար մանկավարժության պահանջները: Ուսուցման գործընթացում ավտորիտարիզմը կարգավորում է սովորողների ուսումնական գործընթացը, ինչպես նաև հնարավորություն է տալիս վերահսկելի դարձնել այդ գործընթացը:

Ինչպես ցանկացած տեխնոլոգիա, ավանդական ուսուցումը ևս ունի դրական կողմեր.

- Համակրգված ուսուցում,
- Կազմակերպչական պարզություն,
- Զանգվածային կրթության նվազագույն ռեսուրսների օգտագործում,
- Վերարտադրողականության զարգացում,
- Բանավոր ներկայացում:

Պետք է հրաժարվել ավանդական ուսուցումից, պարզապես պետք է աննկատելիորեն և ճիշտ համադրել նորարական մյուս տեխնոլոգիաների հետ և ուսուցման արդյունքը կլինի դրական:[8] Այդ իսկ պատճառով առաջարկում ենք ուսումնասիրել մյուս տեխնոլոգիաները և՛ կրթության որակը բարձրացնելու նպատակով:

## Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն ուսուցման գործընթացում:



Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն ուսուցման գործընթացում ունեն իրենց կարևոր նշանակությունը, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը: Ուսուցման մեթոդների ընտրությունը փոխվում է ժամանակին համընթաց, և ՏՀՏ-ների ներդրմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ուսուցման բոլոր բաղադրիչները: Ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի ներդրումը հանգեցնում է էական փոփոխության՝ ավանդական մեթոդները փոխարինելով ժամանակակից մեթոդների, հնարների, համադրելով ավանդական ու ժամանակակից մեթոդները և այլն:[1] Անդրադառնալով անգլերենի դասավանդման արդյունավետության բարձրացման հիմնախնդրին՝ նշենք, որ առկա են ՏՀՏ-ների օգտագործման բազմաթիվ հնարավորություններ, որոնք մեծապես նպաստում են սովորողների կողմից անգլերեն լեզվի լայնածավալ տեղեկատվության դիմելուն յուրացմանը: Ուստի հաշվի առնելով տվյալ առարկայի դիդակտիկական նպատակներն ու յուրահատկությունները՝ նաև մեր դիտարկումների հիման վրա առանձնացրել ենք համակարգչային ծրագրերի հետևյալ տեսակները՝ վարժանքային, ցուցադրական, ուսուցողական, տեղեկատվական, մոդելավորման և մուլտիմեդիա ծրագրեր: ՏՀՏ բաղադրատարրերը, ըստ դիդակտիկական ուղղվածության, առանձնացրել ենք հետևյալ խմբերում՝

1. նյութեր, որոնք նախատեսված են ուսումնական նյութի նախնական ծանոթության, արդյունավետ ընկալման համար (համակարգչային տեքստեր, լուսանկարներ, տեսասկավառակներ),
2. էլեկտրոնային դասագրքեր, կիրառական ծրագրերի և թեստերի փաթեթներ, որոնց դիդակտիկական հիմնական գործառույթներն են սովորողների գիտելիքների ամրապնդումն ու ստուգումը,
3. վիրտուալ լաբորատորիաներ և համակարգչային լսարաններ, որոնցում իրականանում են ուսումնասիրվող գործընթացները, այդ միջոցների դիդակտիկական հիմնական նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումն է,

4. մասնագիտական գործունեության ավտոմատացված համակարգեր և կիրառական այն ծրագրերը, որոնք աշակերտների կողմից կարող են օգտագործվել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ տարբեր աշխատանքներում, այն իրականացվում է որպես ազատ հետազոտություն:

ՏՀՏ բաղադրատարրերի վերը դասակարգված խմբերի գործառության ճանաչողությունը համապատասխանում է սովորողների իմացական գործունեության կազմակերպման փուլերի հիմնավորված հաջորդականությանը՝ ընկալում, գիտելիքների իմաստավորված յուրացում և ամրապնդում, անձնական փորձի ձևավորում (կարողություններ, մասնագիտական հմտություններ), հետազոտական ու որոնողական գործունեություն: Էլեկտրոնային ուսուցման կարևոր հիմնախնդիրներից է դասավանդողի կողմից յուրաքանչյուր սովորողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը: Դասավանդողի անձնային որակները բացառիկ նշանակություն ունեն ուսումնադաստիարակչական գործընթացում: Միաժամանակ շատ սովորողներ հոգեբանական խոչընդոտներ են զգում իրենց ուսումնական գործունեությունն ինքնուրույն պլանավորելու, ուսումնական արդյունքները ճիշտ գնահատելու ուղղությամբ: Դասավանդողի աջակցությունը արտահայտվում է ուսումնական գործունեության պլանավորմամբ, ուսումնական նյութի բովանդակության վերաբերյալ խորհրդատվությամբ, նախագծային ու հետազոտական աշխատանքների կատարմամբ, թեստավորմամբ, գնահատմամբ և այլն: Ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ առաջնային պահանջների թվում է յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցումը:[2] Այդ պահանջը հնարավոր չէր իրականացնել այն ամբողջ ժամանակի ընթացքում, երբ ուսումնական պարապմունքները հիմնականում անցկացվում էին խմբային ձևով: Էլեկտրոնային ուսուցմամբ գործնականում իրականանում է անհատական մոտեցում, որն առավելություն է դիտվում ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, նրա յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը՝ ըստ սովորողի ընդունակությունների ու հնարավորությունների: Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասավանդողի ու սովորողի հարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ ու մատչելի: Այնուհանդերձ նշենք, որ անհատական ուսուցման իրականացման գործընթացում չեն ձևավորվում ուսումնական պարապմունքների խմբային ձևերի կազմակերպման ժամանակ ձևավորվող հատկանիշներ՝ հաղորդակցական կարողություններ, թիմում աշխատելու կարողություններ, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, համակցություն և խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Հատկապես այս պարագայում է լիարժեքորեն իրականանում դասավանդման մեթոդիկայի հին, բայց ժամանակով ստուգված սկզբունքը՝ լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել: Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա



հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն:[3] S<S զարգացումները նպաստում են տեղեկատվական հեռահաղորդակցմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունների արդյունավետ իրականացմանը: Ինտերնետային գլոբալ համացանցն ապահովում է հսկայական ծավալով տեղեկատվության մատչելիություն Երկիր մոլորակի ամբողջ տարածքում: Համակարգչային հաղորդակցման միջոցներից առավել տարածված են էլեկտրոնային փոստը, համացանցը և էլեկտրոնային կրիչները: Այս միջոցները դասավանդողներին և սովորողներին հնարավորություն են ընձեռում համատեղ օգտագործելու տեղեկատվությունը, մասնակցելու խնդիրների լուծմանն ու քննարկմանը: Էլեկտրոնային փոստը լայնորեն կիրառվում է նաև հեռավար ուսուցման ժամանակ հետադարձ կապերի հաստատման ու համակարգման համար: Այն շահավետ է օգտագործել նաև դասավանդողի և սովորողների արդյունավետ համագործակցության համար, որի միջոցով էլ կարելի է գրավոր շարադրել սեփական կարծիքը, հարցեր տալ, առաջարկություններ անել, ծանոթանալ բոլոր մասնակիցների պատասխաններին, առաջարկություններին և կատարել գնահատում: Ինտերնետային գլոբալ համացանցը հնարավորություն է ստեղծում հեռավար կազմակերպելու էլեկտրոնային թեմատիկ կոնֆերանսներ: Դրանք կարող են իրականացվել նաև տվյալ ուսումնական հաստատության տեղային (լոկալ) ցանցում, որին կարող են մասնակցել բոլոր սովորողները՝ քննարկելով ուսումնասիրվող թեմաները: Աշխատանքի ոչ համաժամանակյա ռեժիմը նպաստում է ռեֆլեքսիայի (անդրադարձ կատարելու ունակության) և համապատասխանաբար հարցերի ու պատասխանների արտահայտմանը, իսկ գրաֆիկայի, ձայնի, անիմացիայի կիրառման հնարավորությունները այդպիսի վիրտուալ միջոցառումները (գիտատեսական կոնֆերանս, սեմինար, քննարկումներ և այլն) դարձնում են միանգամայն արդյունավետ: Տեսակոնֆերանսների ժամանակ մասնակիցները փոխհամագործակցում են, միաժամանակ հնարավոր է շփում երկու մասնակիցների միջև (խորհրդատվություն), մեկի հաղորդակցում բոլորի հետ (դասախոսություն), բոլոր մասնակիցների ընդհանուր հաղորդակցում (հեռուստակամուրջ): Հաղորդակցական այդ տեխնոլոգիան ներկայումս լայն կիրառում ունի ոչ միայն կրթական ոլորում, այլև միջմշակութային փոխհարաբերություններում: Համացանցային տեխնոլոգիայի յուրահատկությունն այն է, որ և՛ սովորողներին, և՛ դասավանդողներին ուսումնական գոծույնության համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրների ընտրության մեծ հնարավորություններ են տրվում: Ժամանակակից հեռահաղորդակցության նշված հնարավորությունները նպաստում են ուսուցման նոր ձևի՝ հեռավար ուսուցման կազմակերպման զարգացմանը: Դա յուրահատուկ կրթական համակարգ է, որը հիմնվում է արդի մանկավարժական, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների վրա: Համակարգչային հաղորդակցումն ապահովում է արդյունավետ հետադարձ կապ, ինչպես ուսումնական նյութի մատուցման գործընթացի կազմակերպմամբ, այնպես էլ դասավանդողի հետ հաղորդակցմամբ, որն իրականանում է էլեկտրոնային փոստի, էլեկտրոնային կոնֆերանսի միջոցով: Այսպիսիով՝ էլեկտրոնային ուսուցման համակարգերը միավորում են էլեկտրոնային ուսուցման կազմակերպման հիմնական գործառույթները՝ ուսումնական աշխատանքի ինքնուրույն կազմակերպման գործընթացում աջակցություն

սովորողներին, սովորողների և դասավանդողների անհատական ու խմբային փոխազդեցության կազմակերպումը, սովորողների միջանկյալ ու վերջնական թեստավորումը, ուսուցման գործընթացի հեռավար կազմակերպումը: Իսկ ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որակապես փոխում է դասավանդողի դերը, և նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող ու գնահատող գործընկեր: Տարրական դասարաններում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ուստի ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը: Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և բացառիկ այլ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել ավելի մատչելի, ընկալելի, դիտողական և նույնիսկ «հրավիրող»: Համակարգիչը կարող է օգնել դասավանդողին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար: Էկրանին ցուցադրվող գործողությունների հաջորդականությունը կարող է ավելի դյուրընկալ դարձնել մատուցվող նյութը, գրքային նյութը կարող է վերածվել մի պրակտիկ իրադրության: Ինչպե՞ս են համակցվում SՀ տեխնոլոգիաները և ուսուցման-ուսումնառության նոր մոտեցումները: Կրթության համակարգ ինտեգրվող տեղեկատվական և հեռահաղորդակցական նոր տեխնոլոգիաները պետք է համապատասխանեցվեն մանկավարժության, հոգեբանության և այլ գիտությունների զլխավոր՝ մարդաբանական, անձնակենտրոն ուղղվածությանը:[9] Այսինքն՝ ուշադրության կենտրոնում պետք է լինեն սովորողի անձը և նրա ուսումնառությունը: Այսպիսով՝ կրթական գործունեության մեջ փոխվում է շեշտադրումը՝ ուսուցչակենտրոնից դեպի անձնակենտրոն և դասավանդումից դեպի սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեություն: Մանկավարժական և մեթոդական գրականության մեջ կրթության գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման մի քանի ուղղություն է նշվում, որոնցից պրակտիկայում առավել կիրառելի է.

- համակարգիչը՝ որպես գիտելիքների ստուգման միջոց,
- լաբորատոր գործնական աշխատանք՝ համակարգչային մոդելավորման կիրառմամբ,
- տեխնոլոգիաները՝ որպես ցուցադրման միջոց նոր նյութը բացատրելու ընթացքում,
- անհատական համակարգիչը՝ որպես ինքնակրթության միջոց: Ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը շատ կարևոր է ուսուցումն անհատականացնելու համար: Սովորողները պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները, այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, օրինակ, որ սովորողները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն: Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են սովորողների մտածողությունն ու համակարգչային գրագիտության հմտությունները, օրինակ՝ համակարգչով գրելու դեպքում սովորողներն ավելի ինքնավստահ են: Տեխնոլոգիան կարող է նաև զարգացնել սովորողների գեղարվեստական հմտությունները. տեսաժապավենների ստեղծումը, թվային լուսանկարչությունը և այլ միջոցներ

նպաստում են սովորողների գործունեության գեղարվեստական արտահայտչականության բարձրացմանը:[4] Այն սովորողներին հնարավորություն է տալիս իմաստալից աշխատանք կատարելու: Սովորողները կարիք ունեն ստեղծելու այնպիսի օգտակար հետազոտական աշխատանքներ, որոնք կարևոր արժեք կունենան նաև ուսումնական հաստատությունից դուրս: Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են օգնել դասավանդողին՝ հնարավորություն տալով նրան խնայելու ժամանակը և ջանքերը ներդնելու այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն ուսումնական միջավայրի մշտական գնահատման ու բարելավման համար: Ժամանակակից տեխնոլոգիաների դարում ուսուցման գործընթացում սովորողների կողմից կրթական տեխնոլոգիայի հիմնական տարրերը լիովին կիրառելու համար անհրաժեշտ է, որ դասավանդողները տիրապետեն համակարգչային գրագիտությանը և այն ուսուցանեն նաև սովորողներին: Վերջինս ուսուցման գործընթացում այն կենդանի մթնոլորտը ստեղծելու հիմնական պայմաններից մեկն է, ինչը սովորողների մեջ հետաքրքրություն է առաջացնում ուսումնական գործընթացի նկատմամբ, ավելի հետաքրքիր է դարձնում այն, և ուսուցանվող նյութն ավելի լավ են ընկալում:[10] Համակարգչային ուսուցումը կարող է առավել բարձր արդյունք ապահովել միայն այն դեպքում, երբ լիարժեք գիտակցվի, որ դա բոլորի ու յուրաքանչյուրի գործն է, երբ համակարգչային գրագիտությանը տիրապետելու խնդիրը ձեռք բերի անձնային իմաստ, և այն դիտարկվի որպես անձնային կարևոր որակ:

## **Գլուխ 2. Ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և գործիքների կիրառումը դասապրոցեսում և արդյունքների գնահատում :**

Հետազոտմանը մասնակցել են 6 աշակերտներ: Նրանցից ոմանք տեղյակ էին Quizizz կրթական խաղին, ոմանք՝ ոչ: Հետազոտության համար ընտրել են այնպիսի աշակերտների, որոնք սովորում են մեր դպրոցում, որոնք արդեն ուսանող են և որոնք ապրում են ՌԴ-ում: Նախապես մշակել էի թեման և հարցերը կազմել ըստ տվյալ թեմայի: Թեման ընտրված էր անգլերենից, որը դասավանդում են ես: Աշակերտներին տեղեկացրել էի հետազոտության մասին, նրանք էլ սիրով մասնակցեցին: Նախ ներկայացրել են Quizizz կրթական խաղը, ինչպիսի յուրհատկություններ ունի, ինչպես է այն կառուցված, ինչպես կարելի է այն խաղալ և այլն:

Ընտրել էի (Past Simple) ժամանակածը, թեման բոլորին ծանոթ էր: You Toubе կայքի միջոցով մուտք են գործել armeduchanal կայքը և արդեն պատրաստի վիճակով աշակերտների հետ դիտել ենք տեսաժապավենը՝ ընտրված թեմայի վերաբերյալ: Այնուհետև քննարկել ենք թեման հարց ու պատասխանների տեսքով, նրանց դուր էր գալիս նման ձևի դասապրոցեսը: Տեսանյութը տևել է մոտ 10 րոպե, որի ժամանակ հոտազոտվողները որոշակի գաղափար կազմեցին և՛ թեմայից, և՛ դասապրոցեսից: Տեսանյութի հետ զուգահեռ աշխատել են նաև ես, ժամանակ առ ժամանակ դադարեցրել են տեսանյութը և հարցրել, թե ի՞նչ հասկացաք, ի՞նչ ասվեց, ի՞նչ էր ուզում ասել այս նախադասությամբ և այլն:

Տեսանյութը դիտելուց հետո, խնդրել են, որպեսզի մուտք գործեն Quizizz կրթական կայք և միանան խաղին, որը ես արդեն նախօրոք կազմել էի անցկացվելիք թեմայից:

Հենց սկզբից նշեմ, որ խնդիրներից առաջինը դա տեխնիկական խնդիրն էր:

Իսկ որո՞նք են այդ խնդիրները, և որո՞նք մեզ հանդիպեցին հետազոտության ընթացքում:

1. Համացանցի թերացումը. եղավ այնպես, որ աշակերտներից մեկի հեռախոսը չմիացավ համացանցիցն և Quizizz կրթական կայքին:

2. Հեռախոսների աշխատանքի թերացումը, ոմանց հեռախոսներն արագ էին կատարում գործողությունները, ոմանցը՝ ոչ: Ղա նաև կապված էր հեռախոսների մոդելներից:

Quizizz կրթական խաղի միջոցով հարցերի տեսքով ստուգվեց աշակերտների կողմից ուսումնասիրած թեման, թե ինչպես են երեխաները յուրացրել և հասկացել թեման, որքանով են կարողացել ճիշտ պատասխանել հարցերին: Ուսումնառման թեման եղել է Past Simple (Անցյալ անորոշ) ժամանակածը, որին հետազոտվողները որոշակիորեն ծանոթ էին: Կային աշակերտներ, որոնք փոքր- ինչ գիտեին տվյալ կրթական ծրագրի մասին և կային աշակերտներ, որանք ծանոթ չէին:

Ստորև ներկայացված են հետազոտությանը մասնակցած երեխաները, որոնք ներկա պահին իրենց սարքավորումներով պատասխանում են Quizizz կրթական խաղի հարցերին:



Եվ ահա նրանց գրանցած արդյունքները՝

Վիկտորինայի անվանումը՝ Past simple

Ամսաթիվ՝ 09. 08. 2022 13:59

Ուսուցչուհի՝ Լուսինե Վարդնայան

Միջին արդյունք՝ 69%

Հարցերի քանակ՝ 9

Մասնակիցների քանակ՝ 6

N	Անուն	Ժամ.	Միավոր	Տոկոս	Ճիշտ կատարած
1	Anahit	11 վրկ.	13	100%	9 / 9
2	Ղանի	11 վրկ.	12	92%	8 / 9
3	Աննա	18 վրկ.	9	69%	5 / 9
4	Gayane	25 վրկ.	7	54%	3 / 9
5	Լիլյա Մինասյան	12 վրկ.	7	54%	7 / 9
6	Նարեկ	20 վրկ.	6	46%	6 / 9

Հետազոտվողների մեծամասնությունը սովորում էր ,և սովորում են Արագածոտնի մարզի Գեղարոտ գյուղի միջնակարգ դպրոցում: Հետազոտության գրանցված տվյալները թույլ են տվել ինձ բացահայտել հետևյալը՝

- Այն աշակերտները, որոնք ծանոթ էին Quizizz կրթական խաղին, և այնքան էլ լավ չէին տիրապետում անգլերենին, կարողացան գրանցել լավ արդյունք: Օրինակ Անահիտն ու Ղանին, որոնք ծանոթ էին այս կրթական խաղին, գրանցեցին լավագույն արդյունք: Նշեմ նաև, որ նրանք այս դպրոցում չեն սովորում և չեն սովորել: Նրանք ծանոթացել են այս կրթական խաղին համալսարանում և Ռուսաստանի Դաշնությունում:
- Մեր դպրոցում սովորող աշակերտները, որոնք առաջին անգամ էին ծանոթանում այս կրթական ծրագրին, գրանցեցին բավարար արդյունք:

- Հետազոտվողներից անգլերենին առավել լավ տիրապետող աշակերտուհին, որը անգլերենի միասնական քննության ժամանակ հավաքել է 18 միավոր, այս խաղի ժամանակ հասարակ և իրեն շատ ծանոթ հարցերին պատասխանել էր սխալ, և գրանցել ընդամենը 54% արդյունք:

Այստեղից էլ եկել են այն համոզմանը, որ դեռ դպրոցում ինֆորմատիկա առարկայի շրջանակներում պետք է ուսումնասիրության հանձնվի հետևյալ կրթական ծրագիրը, եթե ցանկանում ենք հստակ և ճշգրիտ արդյունքներ գրանցել: Եվ ոչ միայն այս ծրագիրն այլ նաև այն մյուս կրթական ծրագրերը, որոնց միջոցով ցանկանում ենք իրագործել ուսմանական գործընթացը:


Նախքան հետազոտությունը նշեցի, որ բոլորին ծանոթացրել են Quizizz կրթական ծրագրին, և նախքան բուն հարցերին պատասխանելը կատարվել է փորձնական Quizizz խաղ, սկայան դա էլ բավարար հիմք չհանդիսացավ, որպեսզի այն աշակերտները, որոնք ծանոթ չէին տվյալ ծրագրին, կարողանային հարցերին ճշգրտորեն պատասխանել:

Այն աշակերտը, ում դասավանդել են ես և լավ գնահատել անգլերենի նրա իմացության մակարդակը, ծանոթ չլինելով տվյալ կրթական և նորարարական գործիքին, չկարողացավ պատասխանել իր համար հասարակ հարցերին և գրանցեց վատ արդյունք: Այստեղից եկել են այն համոզմանը, որ դեռ այս մեթոդը բավարար չէ, որպեսզի սրանով ստուգվի աշակերտների գիտելիքները կամ այս գործիքներով իրականացվի ուսումնական գործընթացը:

Ուզո՞ւմ եմ կարևորել նաև հետևյալը՝

1. Տվյալ առարկայի մասնագետը, ով ցանկանում է դասապրոցեսում իրականացնել հետյալ գործիքի կիրառումը, չպետք է ինքը ծանոթացնի դրան, այլ աշակերտները նախօրոք իրենք պետք է իմանան, թե դա ինչ է իրենից ներկայացնում:
2. Դպրոցներն ունենան համապատասխան գույք և հարմարություններ, որպեսզի ուսուցիչը կարողա իրականացնել ժամանակակից տեխնոլոգիական տարբեր սարքերի և գործիքների կիրառումը:
3. Բացի այն, որ ուսուցիչներին են վերապատրաստում և սովորում այս կրթական ծրագրերը, նաև դպրոցներում ևս ուսանեն նույնը, կամ գոնե այս մեթոդները, որոնցով ցանկանում ենք իրականացնել ուսումնական գործընթացը, զետեղեն դասագրքերի մեջ:
4. Եվ 45 րոպեն ուսուցչին բավարար չէ աշակերտներին ծանոթացնել, օրինակ՝ թե ինչ է Quizizz կրթական խաղը, ինպես է պետք այն օգտագործել, բացարտել նոր նյութը, անցկացնել նմանատիվ կրթական խաղեր և այլն:
5. Աշակերտները նախօրոք պետք է ծանոթ լինեն բոլոր այն կրթական ծրագրերին և գործիքներին, որոնցով հրահանգված է ուսուցիչներին կազմակերպել դասապրոցեսը և դրանց օգտագործման միջոցով ուսանել նրանց:

Կատարել են նաև հետևյալ հարցումը: Կցանկանայի՞ք արդյո՞ք, որ դպրոցներում իրագործվի հետևյալ կրթական նորարարական մեթոդները: Եվ ահա արդյունքները՝



Հաշվի առնելով նաև հետազոտվողների կեղմից նշված պատասխանները, նրանք պատրաստ են և ցանկություն ունեն, որ դասապրոցեսում ներգրավվեն նմանատիպ կրթական գործիքներ: Քանի որ նրանք բոլորն էլ ուշադիր և հաճույքով դիտեցին, թե տեսանյութը, առավել ևս մեծ հետաքրքրությամբ և եռանդով խաղացին Quizizz կրթական խաղը:

## Եզրակացություն

Կրթական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս ուսումնական գործընթացը լրացնել կոնկրետ բովանդակությամբ, իսկ արժեքային կողմնորոշված մանկավարժական գաղափարները հարստացնում են ուսուցչի մասնագիտական գիտակցությունը:

Մանկավարժական սեփական փորձի արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ավանդական ձևով աշխատելը հետաքրքիր չէ: Ստեղծվել է իմ կողմից Quizizz հատուկ կրթական թեստավորման ծրագրով մի թեստ, տեսանյութի միջոցով դասի ցուցադրություն և դիտում, որոնք առաջացրեցին կենդանի հետաքրքրություն երեխաների մոտ:

Ցանկանում եմ նշել, որ ժամանակակից կրթական տեխնոլոգիաները ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հետ համատեղ կարող են էապես բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը, լուծել պրոֆիլային դպրոցի առջև դրված խնդիրները բազմակողմանի զարգացած, ստեղծագործ ազատ անձի դաստիարակության և նրանց ապագա մասնագիտական գործունեության նկատմամբ աշակերտների ինքնորոշման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծում:

Իհարկե, կարելի է օգտագործել նախկին ավանդական մեթոդները և: Կարելի է, բայց չպետք է հիմանվորվել և սահմանափակվել այսքանով: Պետք է և կարևոր է ուսումնական գործընթացում օգտագործել տարբեր կրթական տոխնոլոգիաներ և գործիքներ, որովհետև նոր մարտահրավերները նոր մոտեցումներ են պահանջում: Գնահատելով կրթության որակը՝ կարելի է առաջնորդվել տարբեր չափանիշներով, բայց պարզ է, որ պետք է հաշվի առնել ոչ միայն դպրոցականի ներքին արդյունքները, այլև անկախ փորձաքննության պայմաններում աշակերտների ցուցաբերած արտաքին արդյունքները :

Այս կրթական գործիքների կիրառումը թույլ տվեց բարձրացնել ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը:

Ցանկացած ժամանակակից դաս չի կարող անցնել առանց ուսուցման տեխնոլոգիայի խնդրի կամ առանց դրա տարրերի: Դժվարությունների հաղթահարման համար սովորողները նոր գիտելիքների, գործողությունների նոր եղանակների, հմտությունների տիրապետման կարիք ունեն: Երեխաները ավելի լավ են յուրացնում ոչ թե այն, ինչ պատրաստ վիճակում կստանան և կզգան, այլ այն, ինչ իրենք են բացահայտել և արտահայտել իրենց ձևով:

Որպես ուսուցիչ՝ եկել եմ այն եզրակացության, որ դասի ստեղծագործական գործընթացում երեխային ընդգրկելու առավել արդյունավետ միջոցներն են տեխնոլոգիական խաղային գործունեությունը, դրական հուզական իրավիճակների ստեղծումը :

Ղասում խաղերի և խաղային պահերի ընդգրկումն ուսուցման գործընթացը դարձնում է զվարճալի, երեխաների մոտ ստեղծում է աշխատանքային տրամադրություն, հեշտացնում է ուսումնառության դժվարությունները հաղթահարելը:



Խաղն արթնացնում է հետաքրքրություն հաղթանակի մասին, ուստի աշակերտները փորձում են հստակորեն կատարել առաջադրանքները, պահպանելով խաղի կանոնները: Ընդ որում, նրանց մոտ ցանկություն է առաջանում լինել արագ: Հատկապես թիմային խաղերում ձևավորվում են անձի բարոյական հատկանիշներ: Երեխաները սովորում են օգնել ընկերներին, հաշվի նստել ուրիշների շահերի հետ: Նրանց մոտ զարգանում է պատասխանատվության զգացումը, դաստիարակվում է կարգապահություն, կամք, բնավորություն, բարություն:

Ուզում են կարևորել մի շատ հատկանշական հարց,որքան էլ որ մենք առաջ գնանք և փորձենք շարժվել ժամանակի հետ,չպետք է մոռանանք չափի զգացման մասին: Որքան էլ արդյունավետ է նորարական տեխնոլոգիաների կիրառումը կրթության բնագավառում,այնքան էլ այն կարող է վտանգավոր լինել . նախ համակարգչից,հեռախոսից,պլանշետից ու նմանատիպ գործիքներից երկար և անընդհատ օգտագործումը կարող է հանգեցնել տեսողության վատթարացում, ողնաշարի ոչ ճիշտ ձևավորում ու նմանատիվ այլ խնդիրներ:

Եվ ևս մեկ անգամ փաստեն, որ դպրոցներում նախքան կրթական ժամանակակից գործիքներով դասավանդմանն անցնելը կամ դրանք կիրառելը ուսումնական գործընթացում, աշակերտները պետք է նախապես ծանոթ լինեն դրանց:

## Օգտագործված գրականություն

1. Աջամօղլյան Ա. , Ուսուցման կազմակերպումը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, Երևան, 2018:
2. Աստվածատրյան Մ. , Թերգյան Գ. , Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Երևան, 2004:
3. Баранов А.С., Суслов В.Г., Шейнис А.И., Компьютерные технологии в школьной географии.Изд.дом. «Гептер», 2004, 80 с.
4. Финаров Д.П., Методика обучения географии в школе: учебное пособие для студентов вузов/ В.П. Финаров, М.; АСТ, 2007, 382с.
5. Монахов, В.М. От традиционной методики к новой технологии обучения. М.-Тула: Будрус, 2012.
6. Сальникова Т.П. Педагогические технологии: Учебное пособие.- М.:ТЦ Сфера, 2010.
7. Селевко Г.К. Современные образовательные технологии.- М., 2011.
8. . Щуркова, Н.Е. Практикум по педагогической технологии / Н. Е. Щуркова. - М.: Пед. общество России, 2011.
9. Новые педагогические и информационные технологии в системе образования. / Под ред. Е.С. Полат. – М., 2014.
10. . Павлова М.Б., Дж. Питт, М.И. Гуревич, И.А. Сасова «Метод проектов в технологическом образовании школьников» - М.: Вентана - Граф, 2012.